

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀՈՒՇԱԳԻՐ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ ՃՀՀԱՀ), ի դեմս ռեկտորի պաշտոնակատար Եղիազար Վարդանյանի, ով գործում է ՃՀՀԱՀ-ի Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԳՊՀ), ի դեմս ռեկտոր Արտուշ Ղուկասյանի, ով գործում է ԳՊՀ-ի Կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով միջբուհական համագործակցության ապահովման, կողմերի գիտատեխնիկական և կադրային կարողությունների լիարժեք օգտագործման և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1. Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական և գիտահետազոտական ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է, համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2. Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ՃՀՀԱՀ-ում և ԳՊՀ-ում իրականացվող կրթական, միջազգային դրամաշնորհային ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրում, համատեղ կամ կրկնակի որակավորմամբ կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկում և կազմակերպում,

բ/ ՃՀՀԱՀ-ում և ԳՊՀ-ում մշակված առարկայական ծրագրերի, կրթական ծրագրերի արտաքին փորձագիտական գնահատման աշխատանքների իրականացում,

զ/ սովորողների և պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ակադեմիական շարժունության իրականացում՝ նախապես հաստատելով փոխանակման պայմանները, ֆինանսավորումը,

դ/ կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում՝ սովորողների համար հնարավորություններ ստեղծելով կրթություն ստանալու նաև հեռաուսուցման միջոցով,

ե/ սովորողների և դասախոսների մասնագիտական վերապատրաստումների, վարպետության դասերի, կլոր սեղանների, թեմատիկ բանավեճերի կազմակերպում,

զ/ համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացում,

է/ ՃՇՀԱՀ-ի և ԳՊՀ-ի գիտական ամսագրերում համատեղ ուսումնագիտական հետազոտությունների արդյունքների հրատարակում.

ը/ Կողմերի ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական, ուսումնական արտադրական պրակտիկաների փոխադարձ կազմակերպում,

թ/ սովորողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի փոխադարձ զեկավարում և գրախոսում, գիտակրթական և մեթոդական գրականության ու մասնագիտական զարգացմանը նպաստող էլեկտրոնային աղբյուրների տրամադրում, գիտական աշխատությունների, դասագրքերի, ուսումնական նյութերի, ուսումնամեթոդական ձեռնարկների մշակում և խմբագրում,

ժ/ համատեղ հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպում,

ժա/ համատեղ կրթական, գիտական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացում,

ժբ/ մյուս Կողմին արտաքին ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում որպես գործընկեր ներգրավում,

ժգ/ Կողմերի իրականացրած այլ կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

3.2. Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.

ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,

բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

գ/ ապահովել անհրաժեշտ նյութական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,

դ/նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների մասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

- 4.1. Հուշագիրը բաղկացած է 3 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:
- 4.2. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո, եթե որևէ Կողմից այլ առարկություն չի լինում, ապա Հուշագրի գործունեության ժամկետն ինքնըստինքյան շարունակվում է ևս 5 տարի:
- 4.3. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
- 4.4. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1. Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամ
Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Տերյան 105
Էլ. Հասցե՝ info@nuaca.am
Հեռ.՝ +374 10587284

«Գորիսի պետական համալսարան
պետական համալսարան» ՊՈԱԿ
Հասցե՝ ՀՀ, ք. Գորիս, Ավանգարդ 4
Էլ. Փոստ՝ gorissu@mail.ru
Հեռ.՝ +374 0284 2 27 67

Ռեկտորի Պաշտոնակատար
Եղիազար Վարդանյան



Ռեկտոր
Արմուշ Լուկասյան

